Շուշանիկ Կուրղինյան

Շատերից մեկին

Դու Բեթհովենի սոնատն ես ածում
Հարուստ զարդարված շքեղ դահլիճում .
Շուրջդ բարեկամ, փափուկ թավիշ, գորգ
Ու ինքդ հպարտ, նազ դեմքով անհոգ:

Անթիվ մոմերի ցոլքերը փայլուն
Շողում, շողշողում ու քեզ են ժպտում,
Կասես վախեցած կրծքիդ, մատներիդ
Այնպիսի առատ բարձած ակներից,
Ադամանդների շողերից խորշուն
Ու նրանց փառքին սրտանց նախանձում:

Կասես աշխարհի գոհարը լինես,
Կամ քո կյանքի մեջ երբեք տանջված չես,
Վշտին, արցունքին իբրև անտեղյակ,
Անհոգ ու զվարթ վառ գարանան թոչնակ:

Կեղծում ես, թշվա՛ռ . չես համարձակվում
Այն, ինչ խեղդած է քո ստրուկ սրտում,
Ազատ համարձակ պատմելու մարդկանց,
Բանալ վշտերիդ քողն անթափանց:

Խաբում ես, թշվա՛ռ, խաբում են և քեզ,

Շուրջդ հավաքված այն դեմքերը հեզ,
Ինչքան որ նրանց դու ձանձրացնես
Ժպտալով կասեն, որ դու չքնաղ ես:

Եվ այսպես կեղծված, կեղծիքով արբած
Եկար ու կերթաս, թշվառ արարած,
Աննշան հետքով, մինչ մահ անգիտակ
Դրսի աշխարհից— արած ոտնատակ:

1907 թ. 7 հունվարի